Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան

15.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 4-ի նյութական իրավունքի բաժնի 1.13-րդ, 2.15-րդ, 3"10-րդ , 8"41-րդ , 12"33-րդ , 14"46-րդ, 19"62-րդ , 20"42-րդ, 23"27-րդ , 24"30-րդ, 34"61-րդ, 30"80-րդ , 36"64-րդ, 40"9-րդ հարցերը,

13-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում խնդրում ներկայացված փաստերի իրավական վերլուծությունից, ներկայացված տարբերակում առկա է հանցագործությունների համակցություն, քանի որ խնդրի պայմաններից երևում է, որ Թ-ի կողմից առկա է նաև հրազենը պահելու դիտավորություն*, ուստի գնահատականը չի բարձրացվում:

15-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում ոչ միայն օրենսդրությունից, այլ նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումից*, ուստի գնահատականը չի բարձրացվում:

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտած դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

41-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում քրեական օրենքի պրամաբանությունից, քանզի հափշտակության կատարումն այլ անձի ներկայությամբ /բացառությամբ հանցակիցների/ այն պայմաններում, երբ հանցավորը գիտակցել է, որ այդ անձը ընկալում է իր կողմից կատարվող արարքի բնույթը, չի կարող գնահատվել գաղտնիության պայմաններում կատարված, ընդ որում որևէ նշանակություն չունի այդ անձը սեփականատերն է, թե՝ մեկ ուրիշը, հետևաբար հավակնորդի հիմնավորումը ընդունելի չէ, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

33-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի վերլուծությունը խարդախության մասին չեն բխում քրեական օրենսդրության դրույթների ճիշտ վերլուծությունից: Պաշտոնատար անձին փոխանցվող գումարի մի մասը վերցնելը չի վկայում խարդախության հանցակազմի առկայության մասին: Բացի այդ, մեջբերված վճռաբեկ դատարանի դիրքորոշումները կիրառելի չեն սույն դեպքում: Հետևաբար հավակնորդի կողմից պատասխանի այս պարբերակի ընդրությունը և բողոքում ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

46-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները բխում է քրեական իրավունքի տեսության փաստական սխալի պարագայում արարքի որակման կանոններից, ուստի տրվում է 1 միավոր:*

62-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում տարածության մեջ քրեական օրենքի գործողության ռեալ սկզբունքից, այն է ՀՀ տարածքից դուրս ՀՀ քաղաքացու դեմ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու պարագայում օրենքի կիրառման պահանջներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

42-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի նման որակման պայմաններում ծանր վնաս պատճառելուն քրեահրավական գնահատական է տրվում երկու անգամ, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

27-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում խնդրում ներկայացված փաստերի վերլուծությունից, քանզի պարտական վերաբերյալ որևէ հանգամանք առկա չէ,* ուստի գնահատականը չի բարձրացվում:

30-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները ընդունելի չեն, քանի որ անկախ նրանից, թե ինչ եղանակով է կատարվում դրդչությունը, եթե դա արդյունքում հանգեցնում է հանցանքի կատարման /արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների բացակայության պայմաններում/, արարքը պետք է որակել որպես դրդչություն: Հետևաբար հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ*

հիմնավորումները դրդչության բացակայության մասով ՀՀ քրեական օրենսդրության նորմի սխալ մեկնաբանության արդյունք են, ուստի գնահատականը չի բարձրացվում:

61-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, սխալ է մեկնաբանվել քրեական օրենքի գործողության ունիվերսալ սկզբունքի պահանջները , քանզի այդ սկզբունքը չի պահանջում կրկնակի քրեականացում, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

80-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, սխալ է մեկնաբանվել օրենքի հետադարձ ուժը, քանզի արարքը կատարվել է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու օրենքը ուժի մեջ մտնելուց հետո, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

64-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի այդ հիմնավորումները չեն բխում իր իսկ կողմից մեջբերված ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, խիստ թերի են ինչը հնարավորություն թույլ չի տալիս ուղեցույցում նշված ճիշտ տարբերակից շեղվող տարբերակը ճիշտ համարելու համար: Հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումներից հասկանալի չէ, թե ինչու է ընտրվել դ/ տարբերակը՝ յուրացում և յուրացման օժանդակություն: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***5563*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 22 միավորը բարձրացնել 2 միավոր՝ արդյունքում արձանագրել 24 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ _____ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

_____ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ